



Ընդունելության քննություն ֆիզիկայից, 9-10 դաս, 2015-2016 ուստարի

1. Ի՞նչ մասնիկ է պատկերված նկարում:




- ա) դրական իոն,
- բ) բացասական իոն,
- գ) չեզոք ատոմ:

2. Ա նկարում պատկերված լիցքերը փոխազդում են 40 Ն ուժով: Ի՞նչ ուժով են փոխազդում Բ նկարում պատկերված լիցքերը:




3. Ո՞ր մասնիկների շարժմամբ է պայմանավորված էլեկտրական հոսանքը մետաղներում:

4. Գծել նկարում պատկերված էլեկտրական շղթայի սխեման:




5. Ինչպե՞ս կփոխվի (քանի՞ անգամ կմեծանա կամ կփոքրանա) հաղորդչի դիմադրությունը, եթե դրա լայնական հատույթի մակերեսը մեծացվի 3 անգամ, իսկ երկարությունը փոքրացվի 2 անգամ:

6. Որոշել շղթայի AB տեղամասի դիմադրությունը, եթե $R = 40$ Օմ, $r = 60$ Օմ (տես նկարը):



7. Որոշել $R_1 = 20$ Օմ դիմադրությամբ ռեզիստորով անցնող հոսանքի ուժը, եթե $R_2 = 30$ Օմ դիմադրությամբ ռեզիստորով անցնող հոսանքի ուժը՝ $I_2 = 4$ Ա (տես նկարը):




Այս մասում ոչինչ չգրել

8. Որոշել 2 ժ-ում 500 Օմ դիմադրությամբ արդուկի սպառած էլեկտրոէներգիայի դրամական արժեքը, եթե դրանով անցնող հոսանքի ուժը 2 Ա է: 1 կՎտ.ժ-ի արժեքը 40 դրամ է:

9. Նշել երեք եղանակ որոնցով կարելի է մեծացնել հոսանքակիր կոճի մագնիսական հատկություններ:


10. Ի՞նչ ուղղություն ունի նկարում պատկերված հոսանքակիր հաղորդալարի վրա ազդող Ամպերի ուժը (սլաքով ցույց է տրված հաղորդալարով անցնող հոսանքի ուղղությունը):



11. Նշվածներից ո՞րն է լույսի բնական աղբյուր:

- ա) մոմ, բ) լամպ, գ) աստղ, դ) Լուսին:

12. Ո՞րն է եռանկյան ճիշտ պատկերը հարթ հայելում (տես նկարը):



13. Արևի ճառագայթներով լուսավորված շենքը 36 մ ստվեր է գցում: 2,5 մ բարձրությամբ ուղղաձիգ ձողի ստվերի երկարությունը 3 մ է: Գտնել շենքի բարձրությունը:


14. Որոշել միջավայրի բեկման ցուցիչը, եթե անկման անկյունը հավասար է 60° , իսկ բեկման անկյունը 30° :

15. Համապատասխանեցնել հավաքող ոսպնյակի մոտ տեղադրված առարկայի դիրքը, այդ դիրքում ստացվող պատկերի հատկությունների հետ (երկրորդ սյունակում մեկն ավելորդ է):

Ա) Առարկան գտնվում է ոսպնյակի և կիզակետի միջև:
Բ) Առարկան գտնվում է ոսպնյակի կիզակետի և կրկնակի կիզակետի միջև:
Գ) Առարկան գտնվում է ոսպնյակից կրկնակի կիզակետային հեռավորությունից մեծ հեռավորության վրա:

ա) մեծ, ուղիղ, իրական:
բ) մեծ, շրջված, իրական:
գ) փոքր, շրջված, իրական:
դ) մեծ, ուղիղ, կեղծ:

16. Կառուցել նկարում պատկերված առարկայի պատկերը ուսանյակում:



17. Առարկայի հեռավորությունը 0,05 մ կիզակետային հեռավորությամբ հավաքող բարակ ուսանյակից 0,15 մ է:

17.1. Որքա՞ն է պատկերի հեռավորությունը ուսանյակից:

17.2. Որքա՞ն է պատկերի խոշորացումը:

17.3. Որքա՞ն է ուսանյակի օպտիկական ուժը:

18. Ի՞նչ է իրենից ներկայացնում β -մասնիկը:

19. Որոշել քիմիական տարրի կարգաթիվը, եթե դրա միջուկի զանգվածային թիվը 33 է, իսկ միջուկում նեյտրոնների թիվը՝ 17:

20. Ի՞նչ մասնիկներից է բաղկացած տրիտիումի միջուկը:

21. Թվարկել ատոմի միջուկում գտնվող երկու պրոտոնների միջև գործող ուժերը, ըստ դրանց մեծությունների աճման կարգի:

22. Ի՞նչ է բացարձակ աստղային մեծությունը:

23. Ինչպե՞ս է կոչվում լուսատուների՝ երկնային միջօրեականը հաստելու երևույթը:

ա) դիմակայություն, բ) կուլմինացիա, գ) էլնագացիա, դ) խավարածիր:

24. Լուսնի ո՞ր փուլում կարող է տեղի ունենալ Լուսնի խավարում:

ա) նորալուսնի փուլում, բ) կիսալուսնի փուլում,
գ) լիալուսնի փուլում, դ) ցանկացած փուլում:

25. Ի՞նչ է մեկ լուսատարին:

ա) Երկրի ուղեծրի շառավիղը,
բ) մինչև այն աստղ հեռավորությունը, որի տարեկան պարալաքսը մեկ աղեղնային վայրկյան է,
գ) այն հեռավորությունը, որը լույսն անցնում է մեկ տարում,
դ) այն հեռավորությունը, որն անցնում է Երկիրը մեկ տարում: